ՀՈՐԻԶՈՆ 40

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

horizon | HÉBDOMADAIRE ARMÉNIEN – Supplément en français | ARMENIAN WEEKLY – English supplement

VOL. 41 / No.41 (2123), 12+4+4+4 էջ / $1.75

ՄԱՐՏ 9 / 9 MARS / 9 MARCH 2020

ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէն կեանքի կը կոչէ «Արցախի օժանդակութեան յանձնախումբ»

ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէն, մշտապէս պատրաստակամ ըլլալով իր բոլոր կարելիութիւններով արձագանգելու ազատ եւ անկախ Արցախի հզօրացման ջանքերուն, կը շարունակէ ունենալ իր ներդրումը Արցախի պետականութեան ամրապնդման առաքելութեան մէջ։

Կեդրոնական Կոմիտէն՝ խիստ կարեւորելով Արցախի Հանրապետութեան ինքնաբաւութեան հասնիլը, ընկերային, տնտեսական զարգացման համար բարենպաստ միջավայրի ձեւաւորումը, բնական աճի խթանումը, սահմանամերձ շրջաններու ամրապնդման ու վերաբնակեցման հիմնախնդիրները, ի օժանդակութիւն վերոգրեալներու՝ կեանքի կը կոչէ «Արցախի օժանդակութեան յանձնախումբ»։

Յանձնախումբը արդէն իսկ մեկնարկած է իր աշխատանքները եւ յանձնառու է, յանուն Արցախի բարգաւաճման, օգտագործելու իր ամբողջ ներուժը՝ Արցախի Հանրապետութեան մէջ իրականացնելու ընկերային-տնտեսական աջակցութեան եւ զարգացման տարբեր ծրագիրներ։

Միասին՝ յանուն Արցախի։

ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէ

Արցախի մասին Հայ Դատի յանձնախումբի պատրաստած թղթածրարը յանձնուեցաւ Գանատայի Պաշտպանութեան նախարար Հարժիթ Սաճճանի

Կարդալ էջ 8

Մահացած է հայ անուանի յուշարձանագէտ, պատմաբան, բանահաւաք Սամուէլ Կարապետեանը

Կարդալ էջ 8

Աւարտեցաւ Հայ Դատի Յանձնախումբերու Հնգօրեայ Համաժողովը

Կարդալ էջ 3

Սուրբ Յակոբ Ազգային Վարժարանի 45-ամեակին առթիւ կազմակերպուած հանգանակութեան գումարը հասաւ 804,619.36 տոլարի

Կարդալ էջ 8

MARCHÉ
ADONIS
Un univers de fraîcheur
Ste-Catherine - Griffintown - Anjou - Sauvé
Place Vertu- DDO - Brossard - Laval - Laval Est - Gatineau
Scarborough - Mississauga
www.groupeadonis.ca /

Հայոց բանակի երկրորդ զօրասիւնը՝ Զօրընտիր Հայ Դատի յանձնախումբերը

Տասնամեակներու վրայ երկարող ճանապարհ ունի Հայ Յեղափոխական Դաշնակցութեան քաղաքական գործունէութիւնը արտաքին ճակատի վրայ, որուն մղիչ ներուժը կը հանդիսանան աշխարհատարած Հայ Դատի յանձնախումբերն ու գրասենեակները։

Այս օրերուն Երեւանի եւ Ստեփանակերտի մէջ գումարուող Հայ Դատի յանձնախումբերու խորհրդաժողովը պարտաւորութիւնը ունի մշակելու քարոզչական-մարտավարական մօտեցումները, համադրել շրջաններու մէջ իրականացուող գրասենեակներու աշխատանքները, օգտագործել հիմնական թիրախներու ուղղութեամբ քարոզչական ողջ ներուժը եւ նոր որակի բարձրացնել թուրք-ատրպէյճանական հակահայ քարոզչութիւնը սանձելու ուղղութեամբ տարուող աշխատանքներու արդիւնաւէտութիւնը։

Յեղասպանութեան միջազգային ճանաչման հետապնդման առաքելութեան մէջ արդէն իսկ վիթխարի ու պատմակշիռ ձեռքբերումներ արձանագրած Հայ Դատի յանձնախումբը, ՀՅԴ Հայ Դատի ռազմավարութիւնը հիմք ընդունելով՝ Հայոց Յեղասպանութեան ճանաչման հարցին առնչակից ու լծակից կը նկատէ հայոց հողային պահանջատիրութիւնը եւ Յեղասպանութեան միջազգային ճանաչման ճիգերը կ՚իրագործէ քարոզչական եւ մարտավարական համապատասխան լոպպիական ուղեգիծով։

Զուգահեռաբար, Յանձնախումբերը անցնող երեք տասնամեակներուն գործունէութեանց իրենց ուղեծիրը ընդլայնելով, Հայ Դատի մարտավարութեան մէջ ներառած են Արցախի եւ Զաւախքի հայութեան իրաւունքներու միջազգային ճանաչման ուղղութեամբ ծաւալուն դաշտ՝ որուն արգասիքն են վերջին տարիներու Արցախի անկախութեան եւ ինքնորոշման ուղղուած միջազգային պետական եւ նահանգային ճանաչման քայլերն ու նախաձեռնութիւնները։

Այս բոլորը համադրելու եւ իրագործելու համար, Ամերիկեան, Եւրոպական, Ասիական եւ Ովկիանիոյ ցամաքամասերուն վրայ Հայ Դատի յանձնախումբերու նախաձեռնութեամբ կը կայանան հանդիպումներ տարբեր երկիրներու խորհրդարաններու պատգամաւորներու հետ, գործադիր իշխանութեանց ներկայացուցիչներու հետ, քաղաքական կուսակցութիւններու հետ, ցեղասպանութեան հարցերով զբաղող միջազգային ուսումնակեդրոններու հետ եւ ցեղասպանութեան ենթարկուած ժողովուրդներու սփիւռքեան համայնքներու ղեկավարութեանց հետ։

Դաշնակցութեան համար, սկզբունք է, սատարել հայկական պետականութեան արտաքին քաղաքականութեան ամրապնդման եւ Սփիւռքի Դաշնակցութեան կառոյցներու քաղաքական կարողականութիւններու անսպառ ներուժը ի սպաս դնել Արցախի եւ Հայաստանի համար, այն համոզումով՝ որ Սփիւռքի հզօրացումը կարեւոր երաշխիքներէն մէկն է Հայաստանի եւ Արցախի Հանրապետութեանց գոյատեւման, յարատեւման եւ զարգացման։

1981 թուականին, Փարիզի մէջ կայացած ՀՅԴ 22-րդ Ընդհանուր Ժողովը կ՚ամրագրէր Հայ Դատի յստակ ռազմավարական բանաձեւ՝ ուր կը շեշտադրուէր, որ աշխարհի մեծ պետութիւնները, ինչպէս նաեւ Սեւրի դաշնագիրը ստորագրած բոլոր պետութիւնները, բարոյական եւ քաղաքական յանձնառութիւններ ունին հանդէպ հայ ժողովուրդին եւ ցարդ պարտական կը մնան Հայ Դատին։ Հայոց Յեղասպանութեան ճանաչումը, Թրքական պետութեան անժամանցելի պատասխանատուութիւնը քննարկման ենթակայ չեն կրնար ըլլալ – ամբողջական ու արդար հատուցման հարցը այսօր, աւելի քան երբեք, սեղանի վրայ անխուսափելի օրակարգ է։

Միաժամանակ, ՀՅԴ Հայ Դատի յանձնախումբերուն համար անյետաձգելի հիմնախնդիրներ են Հայաստանի եւ Արցախի անվտանգութեան, տարածքային ամբողջականութեան, կայունութեան ու զարգացման հետեւողական ապահովումը։ Հայ Դատի յանձնախումբերը մերօրեայ բազմաբնոյթ մարտահրաւէրներու դէմ յանդիման, կը հետեւին Դաշնակցութեան «Զարգանալ՝ չզիջելով» սկզբունքին, սկզբունք՝ որ Հայաստանի ու Արցախի պաշտպանուածութեան անփոխարինելի զրահանդերձն է – Արցախի հարցի լուծման հիմնական առանցքը։

Տասնամեակներու իր փորձառութեամբ, Հայ Դատի յանձնախումբը գիտակից է, որ Հայաստանի եւ Արցախի Հանրապետութեանց անվտանգութիւնը այսօր համահիւսուած է, եւ քաղաքական քարոզչութեան հարթակի վրայ այդ անվտանգութեան ընթերակայ երաշխաւորը՝ աշխարհատարած Հայ Դատի յանձնախումբերն ու գրասենեակներն են։

«Հորիզոն»ի խմբագրական

Աւարտեցաւ Հայ Դատի Յանձնախումբերու Հնգօրեայ Համաժողովը

24-28 փետրուար 2020 Երեւանի եւ Ստեփանակերտի մէջ գումարուեցաւ ՀՅԴ Հայ դատի յանձնախումբերու եւ գրասենեակներու համաժողովը։

Համաժողովին մասնակցեցան Հայ դատի աւելի քան 20 յանձնախումբերէն եւ գրասենեակներէն եւ ՀՅԴ կուսակցական մարմիններէն մօտ 50 ներկայացուցիչներ։

Համաժողովը քննարկեց Հայ դատի աշխատանքներու ընթացքը 2019-ի յունուարէն առ այսօր։ Լսեց զեկոյցներ՝ Հայաստանի Հանրապետութեան արտաքին քաղաքականութեան մարտահրաւէրներու եւ Հայաստանի ներքաղաքական իրավիճակի մասին։

Խորհրդաժողովի օրակարգին հիմնական կէտերն էին.

– Հայաստանի ի նպաստ իրազեկման (լոպիինկ) աշխատանքներ,

– Պայքարը՝ Արցախի իրաւական միջազգային ճանաչումին համար եւ Ազրպէյճանի հակահայ քաղաքականութեան դէմ. Արցախի բարեկամներու ցանցի աշխուժացում.

– Աշխատանքներ Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչումին եւ պահանջատիրական պայքարին ուղղութեամբ,

– Զաւախքի հայութեան իրաւունքներու պաշտպանութեան ուղղութեամբ նախաձեռնութիւններ,

– Նախիջեւանի հայկական ինքնութեան արծարծում միջազգային շրջանակներու մօտ,

– Սեւրի դաշնագրի եւ Հայաստան-Թուրքիա սահմանին մասին ուիլսընեան Իրաւարար վճիռի 100-ամեակի քաղաքական բովանդակութեամբ նշում,

– Մոսկուայի եւ Կարսի դաշնագրերու 100-ամեակ. անոնց հետեւանքներու սրբագրութեան եւ վերացնելու ձեւերը,

– Սուրիոյ, Լիբանանի, ընդհանրապէս Մերձաւոր Արեւելքի հայութեան աջակցութիւն (Տեղւոյն վրայ եւ Հայաստանի մէջ),

– Հայ դատի յանձնախումբերու եւ գրասենեակներու հնարաւորութիւններու զարգացում։

Համաժողովը իւրաքանչիւր հարցի մասին հանեց համապատասխան եզրակացութիւններ՝ յառաջիկայ գործունէութեան մասին։

Համաժողովը մտահոգութիւն արձանագրեց Արցախի հիմնախնդրի խաղաղ կարգաւորման բանակցութիւններու ներկայ փուլին շուրջ ստեղծուած անորոշութիւններու գծով եւ շեշտեց կարեւորութիւնը հայկական քաղաքական բոլոր ուժերու կողմէ վերահաստատումին, որ Արցախի Հանրապետութեան միջազգային ճանաչումը առաջնահերթութիւն է կարգաւորման գործընթացին մէջ։

Համաժողովին ողջոյնի ուղերձով հանդէս եկաւ Արցախի Հանրապետութեան նախագահ Բակո Սահակեանը, որ ՀՅԴ Հայ դատի կեդրոնական խորհուրդը պարգեւատրեց «Երախտագիտութիւն» մետալով՝ «Արցախի Հանրապետութեան միջազգային ճանաչմանն ուղղուած աշխուժ գործունէութեան, Արցախ-սփիւռք կապերի ամրապնդման ու զարգացման գործում ներդրած նշանակալի աւանդի համար»։ ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեանը ստանձնելով մետալը՝ յայտնեց, որ անիկա գնահատականն է ամբողջ Հայ դատի համակարգի գործունէութեան։

ՀՅԴ ՀԱՅ ԴԱՏԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

«110 Տարեկան ՀՕՄ-ը Իր Մասնակցութիւնը Կը Բերէ Հայապահպանման Համար Կատարուած Բոլոր Աշխատանքներուն՝ Հայրենիքի Եւ Սփիւռքի Տարածքին». ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան ատենապետ տոքթ. Նայիրի Տէրտէրեան

Ստորեւ լոյս կ'ընծայենք հարցազրոյց մը՝ կատարուած «Հայրենիք»-ի խմբագրութեան կողմէ, ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան ատենապետ տոքթ. Նայիրի Տէրտէրեանի հետ։

ՀԱՐՑՈՒՄ.- Վերջերս Մոնթրէալի մէջ տեղի ունեցաւ ՀՕՄ-ի 72-րդ Պատգամաւորական ժողովը։ Ցիշատակելի ի՞նչ իրագործում արձանագրուեցաւ այս ժողովին։ Եթէ կարելի է՝ թուել կարեւորութեան կարգով։

ՆԱՅԻՐԻ ՏԷՐՏԷՐԵԱՆ.- Հետաքրքրական եւ զգացական վայրկեաններով լեցուն ժողով մըն էր, որ տեղի ունեցաւ 7-11 հոկտեմբեր 2019-ին, Մոնթրէալ (Գանատա), 21 երկիրներու ներկայացուցիչներով։ Հայ օգնութեան միութիւնը (ՀՕՄ) ներկայութիւն է 27 երկիրներու մէջ, դժբախտաբար կարգ մը երկիրներէ ներկայացուցիչներ չկարողացան մասնակցիլ յարգելի պատճառներով։ Ժողովի ընթացքին կարելի եղաւ Սուրիահայ օգնութեան խաչի Շրջանային վարչութեան ատենապետուհիին հետ կապ պահել։

Ժողովին կեդրոնացումը գլխաւորաբար հայ ժողովուրդին զօրակցութիւնն էր հայրենիքի եւ սփիւռքի տարածքին՝ կեդրոնանալով հայրենի սահմանամերձ գիւղերու յառաջդիմութեան ստատող նոր ծրագիրներու վրայ, վիրաւոր զինուորներու հիմնադրամ ստեղծելու, Հայաստան բնակող միայնակ տարեցներու խնամատարական ծրագիր մը մշակելու, Արցախի վերաբնակեցման ծիրէն ներս՝ տուն նուիրելու, Ջաւախքի մէջ Ախալցխայի երիտասարդական կեդրոնի՝ վերաշինութեան, Միջին Արեւելքի տագնապալի վիճակին։

Ժողովի 5 օրերու ընթացքին ամէնէն յիշատակելի դէպքը, որ տեղի ունեցաւ, Հարաւային Ամերիկայի ներկայացուցիչներուն օժանդակութեան առաջարկն էր Արժանթինի մէջ գործող ՀՕՄ-ի «Օննիկ Պոտուրեան, Օհաննէս Տիարպէքիրեան» հանգստեան տան համար, որ վերջին քանի մը տարիներուն կը դիմագրաւէ նիւթական տագնապալի իրավիճակ տեղւոյն՝ դրամի արժեզրկումին պատճառով։ Ներկաները տեղւոյն վրայ ընդառաջեցին ընկերուհիին խնդրանքին եւ քանի մը վայրկեաններու ընթացքին հանգանակուեցաւ նախատեսուած 20 հազար տոլարի գումարը։ Իսկ Գանատայի մեր միաւորին ջերմ հիւրընկալութիւնը անմոռանալի յիշատակներով լեցուց բոլորիս սրտերը, որուն համար յատուկ շնորհակալութիւն կը յայտնենք։

Հ.- Յատկապէս սփիւռքի մէջ հետեւողական ներկայութիւն եղած է ՀՕՄ-ը՝ միշտ ալ գործելով եւ իր ներկայութիւնը փաստելով։ Այս գծով, կարելի՞ է վերջին տարիներուն մասին անդրադառնալ, նաեւ՝ նշել ապագայի ծրագիրները։

Ն. Տ.- Նախքան այս հարցումին պատասխանելը՝ կ'ուզեմ անդրադառնալ ՀՕՄ-ի ծնունդին մասին՝ որպէս սփիւռքեան կազմակերպութիւն։

1910 թուականին Նիւ Եորք քաղաքին մէջ, Է. Ակնունիի նախաձեռնութեամբ հիմը դրուեցաւ ամենամեծ համահայկական կանացի միութեան՝ ՀՕՄ-ին, որպէս նպաստամատոյց կազմակերպութիւն։ Ցեղասպանութեան նախօրեակին՝ ՀՕՄ-ը եկաւ յոյս ներշնչելու տառապեալ հայ ժողովուրդին, ծառայելու եւ պայքարելու հայ ժողովուրդին հետ եւ ժողովուրդին համար։

110 տարեկան ՀՕՄ-ը իր բարեսիրական գործունէութեան առընթեր, իր մասնակցութիւնը կը բերէ հայապահպանման համար կատարուած բոլոր աշխատանքներուն՝ հայրենիքի եւ սփիւռքի տարածքին։

Սփիւռքի մէջ վերջին տարիներուն կեդրոնացանք սուրիահայութեան տագնապալի իրավիճակին վրայ, եւ պատերազմի առաջին օրերէն ՀՕՄ-ի մեծ ընտանիքը իր ներդրումը ունեցաւ՝ օժանդակելով՝ պնակ մը տաք ճաշ, տաքուկ բնակարան եւ հովանաւորէ ընտանիքի մը ծրագիրներուն։ Այս ժողովը եկաւ անգամ մը եւս վերահաստատելու նոյն ծրագիրներուն օժանդակութիւնը, առաւել եկաւ հաստատելու Լիբանանի մէջ ապաստանած սուրիահայութեան դիմագրաւած դժուարութիւնները։ Սուրիահայութեան ծրագիրներուն մասնաւորապէս կ'օժանդակեն ԱՄՆ Արեւելեան եւ Գանատայի շրջանները։

Տարիներու ընթացքին որդեգրուած են զանազան ծրագիրներ եւ յատկացումներ՝ սփիւռքահայութեան համար, որոնք շարունակելի են.

Ա) «Երեմեան» կրթաթոշակը, որ սկիզբ առած էր 1983-ին, ներկայիս միացնելով այլ ֆոնտերու՝ կը կրէ «ՀՕՄ-ի կրթաթոշակ» անունը։ Կրթաթոշակ կը ստանան համալսարանական ուսանողներ, որոնք իրենց գիտութիւնը համալսարան աւարտելէ ետք ի սպաս կը դնեն մեր գաղութային ու հայրենիքի կարիքներուն։

Բ) «Ամանոր ծրագիր»-ը, որուն ընդմէջէն Ամանորի սեմին յատկացումներ կը կատարենք Լիբանանի «Թռչնոց բոյն»-ին, Հայկական ծերանոցին, Սուրիոյ պատսպարանին ու ծերանոցին, Հարաւային Ամերիկայի ՀՕՄ-ի երկու ծերանոցներուն, Պուլկարիոյ «Սօսէ» մանկապարտէզներուն, որպէսզի տօնական համախմբումներ կազմակերպեն եւ բաշխեն կաղանդի նուէրներ՝ իրենց խնամքին յանձնուած կարիքաւոր երեխաներուն եւ ծերանոց ապաստանած տարեցներուն։

Գ) Կը հովանաւորենք հինգ «Սօսէ» միօրեայ մանկապարտէզներ՝ Պուլկարիոյ մէջ։

Հ.- Վերանկախացումէն ի վեր նաեւ գործօն է Հայաստանի ՀՕՄ-ը։ Այս գծով յատուկ ծրագիրներ մշակուա՞ծ են։ Եթէ կարելի է՝ բաւական մը մանրամասնել։

Ն. Տ.- Անշուշտ հսկայական ծրագիրներ մշակուած, գործադրուած եւ կամ շարունակելի են Հայաստանի մէջ, տեղին է նշել, որ ՀՕՄ-ի կիզակէտը միշտ եղած է հայրենիքը։ Ներկայիս Հայաստանի Շրջանային վարչութիւնը կանոնաւոր կերպով կ'այցելէ եւ հոգածութիւն կը ցուցաբերէ սահմանապահ զինուորներուն, հաշմանդամ եւ կարիքաւոր զինուորներուն ու անոնց ընտանիքներուն, Հայաստան ապաստանած գաղթական սուրիահայութեան։ Նշեմ քանի մը յատկանշական ծրագիրներ, որոնք սկիզբ առին վերանկախացումէն ի վեր։

Որբախնամ ծրագիրը հաստատուեցաւ 1992-ին՝ Սպիտակի երկրաշարժին եւ արցախեան պատերազմին պատճառով, որբացած մանուկներու խնամատարութեան համար։ 2015-ին արդէն որբերու թիւի նուազումը զգալի էր, եւ որոշած էինք հերթականութեամբ դադրեցնել ծրագիրը, սակայն, ցաւ ի սիրտ, 2016-ին արցախեան քառօրեայ պատերազմին պատճառով նոր որբացած երեխաներու հովանաւորութեան համար Կեդրոնական վարչութիւնը անգամ մը եւս թափ տուաւ այս ծրագրին։

«Ուսանողներու ծրագիր»-ը, որ հաստատուած է 2008-ին, կը հոգայ 18 տարիքը լրացուցած եւ երկրորդական վարժարանը աւարտած որբերու համալսարանական ուսման ծախսին մէկ բաժինը։

1995-ին սկիզբ առաւ «Լաւագոյն ուսանող» ծրագիրը՝ Հայաստանի, Արցախի եւ Ջաւախքի մէջ բնակող յառաջադէմ եւ լաւագոյն արդիւնքները արձանագրող ուսանողներուն համար։

1997-ին հիմնուեցաւ «Մօր ու մանկան առողջապահական կեդրոն»-ը Ախուրեանի մէջ, եւ 2005-ին կեդրոնին կից նաեւ հիմնուեցաւ ծննդատուն մը։ Շիրակի մարզէն ներս գործող առողջապահական կեդրոններուն մէջ առաջնակարգ տեղ կը գրաւէ ՀՕՄ-ի «Մօր ու մանկան» կեդրոնը եւ լաւագոյն արդիւնքներով արդէն բոլորեց երկու տասնամեակ։

Վերեւ նշուած «Ամանոր ծրագիր»-ի ընդմէջէն նաեւ կ'օժանդակենք Հայաստանի մէջ գործող մանկատուներուն, Արցախի «Սօսէ» մանկապարտէզներուն եւ Ջաւախքի երիտասարդական կեդրոններուն։

ՀՕՄ-ի համաշխարհային ընտանիքին կողմէ 2017-էն սկսեալ կ'օժանդակենք Երեւանի թիւ 1 հիւանդանոցի Հայրենիքի պաշտպանի վերականգնողական Կեդրոնի նորոգման աշխատանքներուն՝ յանուն հայրենիքի սահմաններուն պաշտպանութեան եւ ժողովուրդի

• • • ⇒

Կասկածէ վեր է, որ Ջաւախքը մեր հայրենիքի անբաժան մէկ մասնիկն է եւ ռազմավարական մեծ նշանակութիւն ունի: Իւրաքանչիւրիս պարտականութիւնն է հոգալ ու խնամել, օժանդակել անոր բարօրութեան աշխատանքներուն, որպէսզի կարենանք բարեկեցիկ կեանք ապահովել ջաւախահայութեան:

անվտանգութեան համար իրենց առողջութիւնը զոհաբերած զինուորին լաւագոյն խնամք ապահովելու համար:

2019-ին Շրջանային վարչութեան եւ յանձնախումբին ջանքերով «ՀՕՄ արուեստ»-ը իր դռները բացաւ Զարենցի փողոցի վրայ՝ որպէս ցուցասրահ-վաճառատուն, ուր կը վաճառուին զանազան տեսակի հայկական ձեռարուեստներ: Միեւնոյն ատեն ձեռարուեստի դասընթացքներ տեղի կ'ունենան, որպէսզի պահպանենք եւ փոխանցենք մեր ազգային աւանդութիւնները:

ՀՕՄ-ը «Հայաստան» համահայկական հիմնադրամի անդամ ըլլալով՝ կը մասնակցինք Հայաստանի եւ Արցախի զարգացման զանազան ծրագիրներու: 2019-ին բարերար տիկին Մամեանի եւ ՀՕՄ-ի Արեւմտեան շրջանի օժանդակութեամբ կարելի եղաւ Գիւմրիի մէջ 4 բնակարաններ նուիրել կարիքաւոր ընտանիքներու:

Հ.- Արցախի ՀՕՄ-ի մասին կարելի՞ է նոյն ձեւով զեկուցել:

Ն. Տ.- Այո՛, Արցախի ՀՕՄ-ի միաւորը հիմնուեցաւ 1992-ին, ընկերուհիները ամէն գնով օգտակար կը հանդիսանան իրենց շրջապատին՝ սերտ համագործակցութեամբ պատկան մարմիններուն հետ: Արցախի մեր ընկերուհիները նոյնպէս կը հոգան սահմանապահ զինուորներուն՝ իրենց յաճախակի այցելութեամբ եւ մթերքներով:

Արցախի մէջ ունինք «Սօսէ» մանկապարտէզներու ցանցը, որ սկիզբ առաւ, երբ Արցախի կրթութեան գիտութեան նախարարութիւնը ՀՕՄ-ին նուիրեց կիսաքանդ շէնք մը, որ նորոգուելէ ետք իր դռները բացաւ 3-6 տարեկան 87 աշակերտներու դիմաց, ապրիլ 1998-ին: Մինչեւ 2009 թուական մանկապարտէզներու ցանցը հասաւ 12-ի, 2010-ին 4 մանկապարտէզներ յանձնուեցան Արցախի կրթութեան գիտութեան նախարարութեան: Ներկայիս ՀՕՄ-ի մեծ ընտանիքը եւ բարերարներ կը հովանաւորեն 8 մանկապարտէզներ՝ Ստեփանակերտ, Մեծ Թաղեր, Տող, Աշան , Ականաբերդ, Շուշի, Քարեքահ եւ Խնձրիստան, ուր 400 երեխաներ կրթութիւն կը ստանան եւ 73 ընտանիքներու համար աշխատանքի աղբիւր է:

Ստեփանակերտի մանկապարտէզի շէնքը նորոգութեան կը կարօտէր. ՀՕՄ-ի մեծ ընտանիքին ջանքերով վերակառուցուեցաւ արդիական մանկապարտէզի նոր շէնք մը՝ նոյն հողաշերտին վրայ: 6 սեպտեմբեր, 2017-ին Ստեփանակերտի «Սօսէ» մանկապարտէզի նորակառոյց շէնքին պաշտօնական բացումը տեղի ունեցաւ ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան նախաձեռնութեամբ եւ բոլոր միաւորներու, անհատ բարերարներու օժանդակութեամբ: Որպէս նոր ծրագիր՝ 72-րդ Պատգամաւորական ժողովը վաւերացուց, որ շէնքին 3-րդ յարկը օգտագործուի որպէս արտադպրոցական զբօսավայր, նոր սարքաւորումներով:

Հ.- Ընդհանրապէս նորաստեղծ մասնաճիւղեր որեւէ մանրամասնութիւններ կարելի՞ է տալ:

Ն. Տ.- Սուրիոյ քաղաքական տագնապը պատճառ դարձաւ, որ հայ ժողովուրդը անգամ մը եւս գաղթէ եւ բնակութիւն հաստատէ այլ երկիրներու մէջ, մասնաւորապէս՝ եւրոպական քաղաքներու մէջ, այս մէկը պատճառ դարձաւ հայութիւնը համախմբելու եւ նոր մասնաճիւղեր հիմնելու մեր աշխատանքներուն: Անցնող քառամեակին Կեդրոնական վարչութիւնը ընդառաջեց Շուէյտի գաղութներուն մէջ բնակութիւն հաստատած անհատներու դիմումին եւ յուլիս 2018-ին հիմը դրաւ Հոլանտայի Արմելօ եւ սեպտեմբեր 2018-ին Սոտբրթելիի մեկուսի մասնաճիւղերուն:

Հ.- Ջաւախքի վերաբերեալ յիշատակելի իրագործումներ կա՞ն, մանաւանդ որ կը տեղեկանանք, թէ Թիֆլիս միշտ ալ դժուարութիւն կը յարուցէ:

Ն. Տ.- Այո՛, Ջաւախքի եւ ջաւախահայութեան առնչութեամբ դժուարութիւններ եւ մտահոգութիւններ ունինք, սակայն ծրագիրները կը շարունակուին բնականոն կերպով: Ախալքալաքի կեդրոնին կից հողաշերտը մեր սեփականութիւնը դարձաւ: Ջաւախքի երիտասարդական կեդրոններուն յատկապէս կը քաջալերենք: ՀՕՄ-ի Համահայկական 72-րդ պատգամաւորական ժողովը եկաւ կրկին անգամ հաստատելու ջաւախահայութեան ծրագիրները.- հայոց պատմութեան մրցոյթներ, բազմազաւակ ընտանիքներ եւ հաւաքական մկրտութիւն:

Ապագայի համար ժողովը որդեգրեց Ախալցխայի երիտասարդական կեդրոնի վերաշինութեան ծրագիրի օժանդակում:

Կասկածէ վեր է, որ Ջաւախքը մեր հայրենիքի անբաժան մէկ մասնիկն է եւ ռազմավարական մեծ նշանակութիւն ունի: Իւրաքանչիւրիս պարտականութիւնն է հոգալ ու խնամել, օժանդակել անոր բարօրութեան աշխատանքներուն, որպէսզի կարենանք բարեկեցիկ կեանք ապահովել ջաւախահայութեան: Օժանդակել ջաւախահայութեան՝ կը նշանակէ զօրավիգ կանգնիլ ջաւախահայութեան հայրենի հողին կապուած իրենց հզօր կամքին, Ջաւախքը հայ պահելու անոնց պատրաստակամութեան, կը նշանակէ՝ կանխել արտագաղթ, պահպանել պատմական Հայաստանի հիւսիսը, երաշխաւորել այսօրուան Հայաստանի անվտանգութիւնը եւ, մանաւանդ, ապահովել ապագայի միացեալ հայրենիքի տեսլականը:

Հ.- Ներքին սփիւռք, այսինքն՝ նախկին Խորհրդային Միութիւն: Այս լայնատարած եւ հետզհետէ աճող գաղութներուն մէջ գործունէութիւն կա՞յ: Եթէ կարելի՝ է յաւելեալ տեղեկութիւններ տալ:

Ն. Տ.- ՀՕՄ-ի առաքելութիւններէն մէկն է հայապահպանումը: Երբ կ'անդրադառնանք ներքին սփիւռքի մասին, հոն շատ աւելի կարիքը կը զգանք հայապահպանման աշխատանքներուն: Կ'ուզեմ անդրադառնալ Պուլկարիոյ հայ գաղութին, թէեւ Պուլկարիոյ մէջ ունինք 5 մասնաճիւղեր՝ մօտաւորապէս 350 անդամներով եւ ՀՕՄ-ի միօրեայ 5 մանկապարտէզներ՝ Փլովտիւ, Ռուսէ, Պուրկաս, Վառնա եւ Սոֆիա քաղաքներուն մէջ, որոնք կը հովանաւորուին ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան նիւթական յատկացումներով:

Մօտէն կը հետեւինք վերաշխուժացնելու Մոսկուայի միաւորը, իսկ ներկայիս կ'ուսումնասիրենք Ռուսիոյ՝ Ս. Փեթերսպուրկ քաղաքին եւ Ռումանիոյ մէջ նոր մասնաճիւղեր հիմնելու կարելիութիւնը:

Հ.- ՄԱԿ-էն ներս ի ՀՕՄ-ի ներկայութեան եւ գործունէութեան մասին կարելի՞ է տեղեկութիւններ տալ:

Ն. Տ.- ՀՕՄ-ը կը շարունակէ իր աշխատանքները ՄԱԿ-էն ներս՝ մասնակցելով ոչ կառավարական կազմակերպութիւններու ժողովներուն եւ աշխատանխստերուն, որոնք անմիջական առնչութիւն ունին ՀՕՄ-ի նպատակներուն եւ ծրագիրներուն հետ: ՀՕՄ-ի՝ ՄԱԿ-ի յանձնախումբը մշտական եւ գործուն ներկայութիւն է ՄԱԿ-էն ներս:

Սերտ համագործակցութեամբ ՄԱԿ-էն ներս Հայաստանի Հանրապետութեան Մշտական ներկայացուցչութեան, կը մասնակցինք ՄԱԿ-ի Կանանց իրավիճակի յանձնաժողովներուն:

ՄԱԿ-ի Տնտեսական եւ ընկերային զարգացման յանձնաժողով / Economic and Social Council of the United Nations (ECOSOC)

Ընկերային զարգացման յանձնաժողով / Commission for Social Development (CSocD)

Կանանց իրավիճակի յանձնաժողով / Commission on the Status of Women (CSW)

ՄԱԿ-ի Կին / UN Women

Փեքին 2020 / Beijing 2020

Կ'ուզեմ այստեղ շեշտել, որ անցնող քառամեակին կարելի եղաւ բարելաւել ՄԱԿ-ի մեր Վարժողական ծրագիրը եւ արդէն իսկ 10 հայ ուսանողներ մօտակայ շրջաններէն մաս կազմեցին այս ծրագրին:

Հ.- Եզրակացնելու համար, ապագայի վերաբերեալ յատուկ ծրագիրներ ու առաջարկներ կա՞ն:

Ն. Տ.- Այո՛, Պատգամաւորական ժողովը 49 բանաձեւերու վրայ կեդրոնացաւ, անոնցմէ կ'ուզեմ նշել քանի մը հատը.

110-ամեակ

2020 թուականը կը բոլորէ ՀՕՄ-ի հիմնադրութեան 110-ամեակը: Որպէս մարդասիրական եւ բարեսիրական միութիւն՝ հաստատ համոզումով կը շարունակենք հայապահպանման սրբազան մեր առաքելութիւնը: ՀՕՄ-ը միակ հայ կանացի կազմակերպութիւնն է, որ 110 տարիներ վառ պահեց հայ կնոջ արժանիքները: 110-ամեակը առիթ մըն է, որ արժանավայել ձեւով տօնակատարենք մեր կազմակերպութեան նուաճումները եւ վերանորոգենք մեր ուխտը: Ուստի ծրագրած ենք ձեռնարկներու շարք մը՝ Հայաստանի եւ Արցախի մէջ, օգոստոս 30 - 10 սեպտեմբեր, 2020-ին:

Դրամահաւաք

Անհերքելի իրականութիւն է, որ միայն բարոյական աշխատանքով կարելի չէ յաջողութիւն արձանագրել: Որպէսզի աւելի հեշտութեամբ կարենանք ՀՕՄ-ի բազմածաւալ աշխատանքը շարունակել, մեր ծրագրումներու շարքին է դրամահաւաք՝ ուռճացնելու համար ՀՕՄ-ի հիմնադրամը եւ սատարելու վերոյիշեալ նշուած ծրագիրներուն:

Երիտասարդներու ներգրաւում

Առաջնահերթ տեղ կը գրաւէ երիտասարդներու ներգրաւումը ՀՕՄ-ի շարքերէն ներս, ընթացքի մէջ են հանդիպումներ մասնագէտ անձերու հետ, որոնք հիմնական աշխատանք պիտի տանին՝ Կեդրոնական վարչութեան տուեալներուն վրայ հիմնուելով: Այս ծրագրումներու շարքին է նաեւ երիտասարդներու համար համագումարներ կազմակերպել:

Ընկերային Համացանց / PR

ա) ՀՕՄ-ի կայքէջը արդիական ձեւով բարելաւուած է, շաբաթական դրութեամբ կու տայ ընդհանուր տեղեկութիւններ՝ մեր գործունէութեան մասին, առաւել՝ կարելիութիւնը ունինք նուիրատուութիւններ ընդունելու:

բ) Հոկտեմբեր 2019-ին կարելի եղաւ տեղադրել ՀՕՄ-ի Գործունէութեան քարտէսը, որ կը բնութագրէ ՀՕՄ-ի աշխարհասփիւռ ծրագիրները եւ աշխատանքները:

գ) «Հայ Սիրտ»-ը, որ ՀՕՄ-ի միակ օրկանն է եւ մեծ ներդրում ունեցած՝ ՀՕՄ-ը ծանօթացնելու մեր ժողովուրդին, միեւնոյն ժամանակ սատարած է հայ կնոջ զարգացման, աւելի թափ պիտի տանք անոր յաճախակիօրէն հրատարակութեան՝ օգտագործելով արդի էլեկտրոնային տարբերակը: Առաւել՝ աշխատանք կը տանինք «Հայ Սիրտ»-ի ընդհանուր հատորներու թուայնացման: Նաեւ պիտի սկսինք մնայուն ծրագիրներու արխիւներու թուայնացումը:

ՀՕՄ-ի մեծ ընտանիքը եւ բարերարներ կը հովանաւորեն 8 Արցախի մանկապարտէզներ՝ Ստեփանակերտ, Մեծ Թաղեր, Տող, Աշան , Ականաբերդ, Շուշի, Քարեքահ եւ Խնձրիստան, ուր 400 երեխաներ կրթութիւն կը ստանան եւ 73 ընտանիքներու համար աշխատանքի աղբիւր է:

«Մեր Թշնամիները Հայաստանի Եւ Արցախի Սահմաններից Դուրս Են». Յակոբ Տէր Խաչատուրեան

Ստորեւ ՀՅ Դաշնակցութեան Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր-Խաչատուրեանի խօսքը ՀՅԴ 130-ամեակին նուիրուած հանդիսութեան, Շուշի։

Գերաշնորհ եւ սիրելի Սրբազան հայր, յարգարժան հիւրեր, հայրենակիցներ, ընկերներ

Հայ յեղափոխական դաշնակցութեան 130-ամեակին նուիրուած տօնակատարութիւնների մեկնարկը սկսում ենք ազատագրուած Արցախից։ Առհասարակ, ՀՅԴ 130-ամեակը նշելը ոչ միայն տօնակատարութիւն է, այլ նաեւ հաշուետուութեան առիթ՝ ժողովրդի առջեւ։ Դաշնակցութիւնը յոյսի ու նուիրումի կազմակերպութիւն է՝ հայոց ազատատենչ ու առնական ոգին մարմնացնող, հայ ժողովրդի տեսլականը քայլ առ քայլ իրականացնող, հայոց պետականութեան հիմքերն ամրապնդող, Արցախի հիմնահարցն անխոնջ հետապնդող, ինչպէս նաեւ՝ Ջաւախքի ու Արեւմտեան Հայաստանի հայութեան իրաւունքները շեշտադրող։ Մի խօսքով, հայ ժողովրդի վառ ապագայի յոյսը հունաւորողն է մեծ ու աննահանջ մարտնչող այս կառոյցը։

Պետականութեան առկայութեան ու բացակայութեան հանգրուաններում՝ իր 130-ամեայ պատմութեան ընթացքում ՀՅԴ-ն լծուած է հայ ժողովրդին ծառայելու գործին՝ միշտ կարեւորելով գործը ռոստոմեան վճռակամութեամբ, միշտ անսալով քրիստափորեան յարատեւ կռուի պատգամին եւ միշտ կառչելով զաւարեանական բարոյական հանգանակին, ու ամուր գաղափարական միատեսակութեան կողքին՝ նաեւ վարչական ապակենտրոնացման նրա համոզմունքին։ Սկզբունքներ, որոնք այսօր էլ թարմ ու այժմէական են։

Հայաստանի վերանկախացումից ու Արցախի ազատագրումից յետոյ բազմապատկուել են մեր գործունէութեան դաշտն ու ծրագրերը։ Իր աշխարհասփիւռ համահայկական կառոյցով ՀՅԴ-ն պարտաւոր է աջակցել իր հայրենիքի ու հայութեան բազմաթիւ կարիքների լուծմանը։ Բայց որպէս պատասխանատու եւ լուրջ կազմակերպութիւն՝ այն շարունակաբար ճշտում եւ այժմէականացնում է իր առաջնահերթութիւնները, որոնցից իւրաքանչիւր տարուայ համար ընտրւում են էականները։ Դրանց իրագործման համար տրամադրւում են մեր կազմակերպութեան տրամադրութեան տակ գտնուող նիւթական աղբիւրներն ու մարդկային ներուժը։ Այդ տարեկան առաջնահերթութիւններն անպայմանօրէն եւ առնուազն պէտք է ներառեն Հայաստանը, Արցախը, սփիւռքը եւ Հայ դատը։ Մնացեալները ճշտւում են ըստ ծրագրերի եւ ժողովների որոշումների։ Հայաստանի պարագայում՝ բնական է, որ համահայկական մեր յստակ նպատակը ինչպէս անցեալում, նաեւ այսօր պետականութեան հիմքերի ամրապնդումն է՝ օժանդակելով կաշառակերութեան դէմ պայքարին, մտածուած ու ոչ կործանարար փոփոխութիւններին, որպէսզի անցնցում մնայ մեր հայրենիքը, իսկ մեր ժողովուրդը ազատ, անվտանգ ու իրեն յատուկ ստեղծարար ոգով անխափան ծաղկեցնի հայրենիքը։

Այդ հայրենիքը, մեր պատկերացմամբ, պէտք է ունենայ իսկական ժողովրդավարական դիմագիծ, իշխանութեան օրէնսդիր, գործադիր եւ դատական ճիւղերի լրիւ տարանջատում ու փոխադարձ հակակշռում, ազգային գաղափարախօսական պինդ յենարան, կարծիքների այլազանութեան քաջալերում եւ առողջ կառուցողական բանավէճի հնարաւորութիւն, համերաշխութիւն՝ նաեւ առանց բաժանարար կեղծ գծերի պարտադրանքի, ընկերային արդարութիւն եւ տնտեսական հնարաւորութեան ընձեռում ժողովրդի բոլոր շերտերին։

Բարկացկոտ ու յեղափոխութեան պիտակի տակ ներքին պառակտումների տանող քաղաքականութիւնը պէտք է փոխարինուի հայրենի ժողովրդի եւ համազգային մակարդակով միասնականութիւն ստեղծելու միտումով, որպէսզի համախմբուած ճիգերով դիմագրաւենք Հայաստանի Հանրապետութեան ներքին եւ արտաքին մարտահրաւէրներին։ Բնականաբար մեր կազմակերպութիւնը հայրենիքում լծուած է նաեւ առօրեայ քաղաքական աշխատանքին, եւ որպէս արտախորհրդարանական ուժ՝ իր աշխատանքները ծաւալում է մասնագիտական ոլորտային յանձնախմբերի ճեւաչափով, որպէսզի կառավարական տարբեր ծրագրերի այլընտրանքներ ներկայացնի։ Ինչպէս անցեալում, այսօր եւս ճշդին ասելու ենք ճիշդ, իսկ սխալի պարագայում՝ ոչ միայն սխալ, այլ նաեւ ներկայացնելու ենք այլընտրանքներ՝ որպէս նոր հունաւորուող ուղիներ մեր անելիքների եւ գաղափարների մասին։ ՀՅԴ-ի համար Հայաստանում երիտասարդութեան ներգրաւումը, մտաւորականութեան համախմբումը, ժողովրդի մէջ համերաշխութեան ու իսկական հանդուրժողականութեան ստեղծումն առաջնահերթութիւններ են, որովհետեւ Հայաստանի մէջ մենք թշնամի չունենք։ Մեր թշնամիները Հայաստանի եւ Արցախի սահմաններից դուրս են։ Դրա համար անհրաժեշտ է, որ այս հանգրուանում, երբ այդքան նօսրացած են նիւթական միջոցներն ու մարդկային ներուժը՝ համախմբուել, որպէսզի կարողանանք ազգովի բռնցքուել։

Շուտով մենք նշելու ենք նաեւ մեր հիմնադիրներից՝ Քրիստափոր Միքայէլեանի մահուան 115-րդ տարելիցը։ Ինչպէս շատերդ տեղեակ էք, նա հանգչում է Պուլկարիայում, որտեղ եւ նահատակուեց իր գործի ճամբին։ Մենք պատրաստւում ենք համահայկական միջոցառմամբ նշել՝ այցելելով նրա շիրիմին։ Այդ շրջանակում Պուլկարիայում նաեւ տեղի կ՛ունենայ միջազգային գիտաժողով։ Արցախի պարագայում՝ մեզ համար հոգեկան մեծ հրճուանք է գտնուել այս մայր հողի վրայ, որովհետեւ Արցախը մեր հարազատ տունն է՝ անկախ նրանից, թէ որտեղ ենք բնակւում, անկախ նրանից, թէ մեզնից իւրաքանչիւրը որտեղ է գործում։ Ուրախ եմ ասելու, որ Արցախի պարագայում մենք իշխանութեան հետ ունենք ամբողջական գործակցութիւն տասնամեակից աւելի, ներկայ իշխանութեան տարբեր օղակների հետ բեղուն գործունէութիւն ենք ծաւալել՝ ի շահ մեր ժողովրդի եւ ի սպաս Արցախի դատի։ Բնական է, որ այդ առումով անելիքների հիմնական կողմը մեր կենտրոնացումն է Արցախի անվտանգութեան ապահովման, ինքնորոշման իրաւունքի միջազգային ճանաչման ու տնտեսական զարգացման խնդիրների վրայ։ Վկայ՝ անցած տարուայ հոկտեմբերին Արցախի բարեկամների խորհրդաժողովը, որը համախմբեց աւելի քան 150 օտարազգի քաղաքական, մտաւորական գործիչների ու լրագրողների, որոնք եկան Ստեփանակերտ՝ հակառակ Ազրպէյճանի ամէն տեսակ սպառնալիքների։ Խորհրդաժողովին յայտարարուեց Արցախի օտարազգի բարեկամների նոր ցանցի ստեղծման մասին։ Այդ ցանցն օրէցօր աճում է, եւ արդէն համախմբում է շուրջ 200 մարդու։

Արցախի համար մենք շարունակաբար նախաձեռնութիւններ ունենք։ Բնականաբար յառաջիկայ ամսուայ ընթացքում հիմնական աշխատանքը կապուած է Արցախի ընտրութիւնների հետ։ ՀՅԴ-ն յայտարարել է, որ մասնակցելու է իր թեկնածուով՝ յանձինս ընկեր Դաւիթ Իշխանեանի, նաեւ շեշտել է այդ ընտրութիւնների ամբողջովին արդար, թափանցիկ եւ անցնցում անցկացնելու անհրաժեշտութիւնը։ Որպէս համահայկական կազմակերպութիւն՝ մենք պէտք է լինենք այդ նպատակակէտերի իրագործման համար երաշխիքներ տրամադրող։ Սփիւռքի պարագայում՝ լաւ գիտէք, որ ՀՅԴ-ն ունի պետականակերպ դերակատարութիւն ներհամայնքային կեանքում։ Իր ուղեկից կազմակերպութիւններով այն մեր համայնքներին մատուցում է բազմատեսակ ծառայութիւններ՝ մանաւանդ շեշտադրելով հայապահպանման, իսկ վերջին տարիներին՝ նաեւ հայակերտման անհրաժեշտութիւնը։

Հայակերտում ասելով՝ մենք հասկանում ենք, հայութեան պահպանումից բացի, սփիւռքի՝ ձուլման վտանգի ենթարկուած տարբեր բաղադրիչ մասերի վերադարձը հայութեանը։ Խնդիրը ներառում է եւ տարբեր երկրներում ձուլման վտանգուած համայնքների եւ Արեւմտահայաստանի թաքուն հայերի հարցերը։ Հոյակապ գաղափար, որի իրագործմանը լծուած է ՀՅԴ-ն։ Մենք նաեւ յայտարարել ենք, որ յանձնառու սփիւռքը հզօր հայրենիքի գրաւականն է։ Ամուր հաւատում ենք այդ տեսլականին, նաեւ պնդում, որ սփիւռքում ապրող իւրաքանչիւր յանձնառու հայ իր ուշադրութիւնն ու կիզակէտը դարձնի հայրենիքին՝ Հայաստանին ու Արցախին։ Բնականաբար այնտեղ նոյնպէս անհրաժեշտութիւն է զգացւում շարունակական այժմէականացման եւ թարմացման։ Այդ ուղղութեամբ ՀՅԴ-ն այլ համահայկական կառոյցների հետ պիտի ձեռնարկի սփիւռքահայութեան խորհրդաժողով՝ հաւանաբար յառաջիկայ ամրանը։ Ինչ վերաբերում է Հայ դատին, ապա մեր խորհրդաժողովի այս երկու օրերի ընթացքում այդ բաւականին խօսուել է։ Պէտք է նշեմ, որ մենք պիտի շարունակենք աշխատել 4 ուղղութիւններով.

1.- Նեցուկ կանգնել Հայաստանի Հանրապետութեանը եւ Արցախի Հանրապետութեանը՝ որպէս հիմնական առաքելութիւն։

2.- Ցեղասպանութեան ճանաչման եւ պահանջատիրութեան խնդիր։

3.- Հայապատկան հողերի վրայ ապրող հայութեանը, այդ թւում՝ նաեւ Ջաւախքի մեր քոյրերին ու եղբայրներին օժանդակութիւն, որպէսզի յարգուեն ու զարգանան նրանց անհատական ու հաւաքական իրաւունքները։

4.- Հայ դատի պայքարին մեր ժողովրդի, մանաւանդ երիտասարդութեան ներգրաւման աստիճանի բարձրացում։

Սիրելի՛ հայրենակիցներ, ՀՅԴ-ն ունի հարուստ աւանդոյթներ, որոնց էական մասը մնում է անփոփոխ, իսկ ռազմավարութիւնն ու մարտավարութիւնը միշտ յարմարեցւում են ժամանակների պահանջներին։ Դա է մեր գոյատեւման ու երկարակեցութեան գաղտնիքը։ ՀՅԴ-ն նպատակասլաց կազմակերպութիւն է, որն իր առաքելութիւնն իրագործում է հաւաքական ղեկավարութեամբ եւ գաղափարական ամուր հենքով։ ՀՅԴ-ն քաջ գիտակցում է, որ երբ տիրական անձն է կենտրոնացած ձեւով ուժի կուտակում ապահովողն ու քաղաքականութիւն թելադրողը, տուժում է ամբողջ կառոյցը։ Ուստի, ժամանակի ընթացքում անձի հետ կը վերանայ նաեւ իր ղեկավարած կառոյցը։ Իսկ երբ հաւաքական է ղեկավարութիւնը, համոզիչ եւ նոյնիսկ վարակիչ է գաղափարախօսութիւնը եւ, միաժամանակ, երկաթեայ կարգապահութիւն ունեն նրա շարքերը, ապա այդ կազմակերպութիւնը կը մնայ ամուր՝ պարբերաբար վերանորոգուող ու նոր սերունդներ ներգրաւող։ ՀՅԴ-ն առաջնորդւում է այս վերջին տարբերակով։ Այս է պարզ ու ջինջ իրողութիւնը, որքան էլ լուրջ, թէ կեղծ վերլուծաբաններ փորձեն տարբեր ժամանակաշրջաններում անհիմն ու շինծու որակումներ տալ։ Մենք անեղբ քայլելու ենք այն ճանապարհով, որ գծել է մեր ծրագիրը՝ յստակ առաջադրանքներով, մեր Ընդհանուր ժողովները՝ արտացոլելով համաշխարհային կառոյցների լիազօր պատգամաւորների հաւաքական կամքը, եւ մեր գործադիր մարմինների որոշումները՝ միշտ շօշափելով մեր շարքերի բազկերակը եւ որոնելով արդիական մօտեցումներ հին ու նոր մարտահրաւէրների դիմագրաւման համար։ Մենք անվարան սպասարկելու ենք մեր հայրենիքի՝ Հայաստանի ու Արցախի եւ ազգի շահերը՝ անեղբ հաւատով, բարձր բարոյականութեամբ ու ամբողջական նուիրումով։

ՀՈՐԻԶՈՆ www.horizonweekly.ca

ԾՈՒՐԻՉՆ
ՅԱՒԵԼՈՒԱԾ

9 Մարտ 2020

ՀԱՅԿԱԿԱՆ ՋԱՒԱԽՔ

ՋԱՒԱԽՔԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ՋԱՒԱԽՔԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ՀՆԱԴԱՐՈՒՄ

Ջաւախքը պատմական Մեծ Հայքի թագաւորութեան հիւսիսում ընկած Գուգարք աշխարհի ինը գաւառներից մէկն է: Այն մ.թ.ա. 2-րդ հազարամեակում մաս է կազմել Հայասա պետական կազմաւորմանը, «Զաբախա» ձեւով յիշատակւում է Արգիշտի Ա. թագաւորի (մ.թ.ա. 786-764) արձանագրութիւններում:

Մ.թ.ա. 6-3րդ դարերում, Ջաւախքը Երուանդունի թագաւորութեան հիւսիսային գաւառներից էր: Կարճ ընդմիջումից յետոյ Գուգարք նահանգի հետ այն Արտաշէս Ա. Բարեպաշտի (մ.թ.ա. 189-160 թ.) կողմից վերամիացուել է Մեծ Հայքի թագաւորութեանը, որի կազմում մնացել է մինչեւ Արշակունեաց հարստութեան անկումը: Արշակունիների օրօք գաւառը յիշատակւում է որպէս Վարձաւունի նախարարական տան կալուածք:

ՋԱՒԱԽՔԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ՋԱՔԱՐԵԱՆՆԵՐԻ ՕՐՕՔ

428 թուականից յետոյ երկրամասը սասանեանները մտցրել են պարսկական մարզպանութեան մէջ: 7-րդ դարի երկրորդ կէսին այն գրաւուել է արաբների կողմից:

10-րդ դարում Ջաւախքը հայ Բագրատունիների թագաւորութեան կազմում էր, որի կործանումից յետոյ կարճ ժամանակով՝ 11-րդ դարի կէսերին ենթարկուել է վրաց պետութեանը՝ մինչեւ Սելճուք թուրքերի արշաւանքները:

12-րդ դարի վերջից, ի թիւս Հիւսիսային Հայաստանի այլ գաւառների, Ջաւախքն իր Թմուկ (Թմկա) բերդի ու Ախալքալաքի (Նոր քաղաք) հետ տրուել է հայ Զաքարեաններին՝ որպէս ժառանգական կալուածք: Այնտեղի հայ հոգեւոր կեդրոնը եղել է Զրէսկ աւանը: Մոնղոլական լծի տապալումից յետոյ 1266 թ. այս տարածաշրջանը եղել է Սամցխէ - Ջաւախք իշխանութեան կազմում: 1587 թ. այն գրաւել են Օսմանեան թուրքերը եւ մտցրել Չլդրի (ապա՝ Ախալցխա) Էյալէթի (վիլայէթ, նահանգ) մէջ՝ իբրեւ առանձին սանճագ (գաւառ):

ՋԱՒԱԽՔԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ՄԻՆՉԵՒ ԳԱՂԹ

19-րդ դարի սկզբին Ջաւախքը Հարաւային Կովկասի այլ գաւառների հետ յայտնուեց ռուսական կայսրութեան արտաքին քաղաքականութեան ոլորտում:

1828 թ. Յուլիսին, զօրավար Ի. Ֆ. Պասկեւիչի զօրքերը գրաւեցին Ջաւախքի կեդրոն Ախալքալաքը:

1828 թ. Արեւմտեան Հայաստանի Էրզրումի, Բասենի, Բաբերդի, Դերջանի եւ այլ գաւառներից 7300 հայ ընտանիքներ Կարապետ Արքեպիսկոպոս Բագրատունու գլխաւորութեամբ գաղթեցին եւ բնակութիւն հաստատեցին Ախալցխայի, Ախալքալաքի եւ Ծաղկայի (պատմական Գուգարաց աշխարհի Թռէղք գաւառը) շրջակայքում՝ վերականգնելով ու հիմնադրելով աւելի քան 60 գիւղ եւ 50 եկեղեցի:

Այդ գաղթի շնորհիւ կրկին վերականգնուեց Ջաւախքի նախկին հայեցի էթնիկական (խմբգր. ցեղային) պատկերը: Տեղացի 1716 ընտանիք (մօտ 10 - 11 հազար շունչ) հայերի, 639 ընտանիք մահմետականների ու 179 ընտանիք վրացիների կողքին հաստատուեցին 58 հազար արեւմտահայեր:

ՋԱՒԱԽՔԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԳԱՂԹԻՑ ՅԵՏՈՅ ՄԻՆՉԵՒ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՅՈՒՄ

1840 թ. Ախալքալաք գաւառը, որ կազմում էր թուրքական նախկին սանճագի հիմնական տարածքը, մտցուեց Վրացա - իմերեթական, իսկ 1846 թ.՝ Թիֆլիսի նահանգին մեջ, 1874 թ. վերածուեց ինքնուրոյն գաւառի:

1841-1843 թ. Ռուսաստանի տարբեր մարզերից աքսորուած ռուս աղանդաւորները՝ դուխոբորները (խմբգր. հոգու համար պայքարողներ), գաւառի հարաւային մասում (այժմեան Նինոծմինդայի շրջան) հիմնում են 8–9 գիւղ: Այսպէս, Ջաւախքը դառնում էր բազմազգ:

1886 թ. գաւառում առկայ էր 110 գիւղ, որոնք միաւորւում էին 10 գիւղական համայնքներում՝ ընդամէնը մօտաւորապէս 63,8 հազար բնակչութեամբ, որից 46386-ը, այսինքն՝ 72,7%-ը՝ հայեր էին: Մահմետականները 10,7% էին, ռուս դուխոբորները (խմբգր. հոգու համար պայքարողներ)՝ 10,4%, վրացիները՝ 5,8%:

Ռուսական տիրապետութեան շրջանում Ախալքալաքի գաւառը սոցիալ(խմբգր. ընկերային) - տնտեսական եւ մշակութային զգալի վերելք ապրեց: Ախալքալաքը դարձաւ արհեստաւորական կեդրոն, իսկ գիւղերը սկսեցին կարեւոր դեր խաղալ Անդրկովկասում հացահատիկի ու մսամթերքի արտադրութեան բնագաւառում:

1830-ական թ. սկզբներին Կարապետ Արքեպիսկոպոսի նախաձեռնութեամբ Ախալցխայում բացուեցին Կարապետեան, Ախալքալաքում՝ Մեսրոպեան ծխական արական դպրոցները: 1856 թ. բարերար Կարապետ Եաղուբեանի ջանքերով աւարտուեց Ս. Խաչ եկեղեցու

վերաշինութիւնը: 1870 թ. սկսեցին գործել Սանդիտեան օրիորդաց, իսկ 1880-ական թ. սկզբին՝ ռուսական դպրոցները, 1889 թ.՝ քաղաքային ուսումնարանը, ստեղծուեց թատերական խումբ:

19-րդ դարի վերջին Ախալքալաքում Ջ. Տէր Գրիգորեանի եւ Պ. Աբէլեանի ջանքերով ստեղծուեց ազատագրական խմբակ: Այստեղ իր գործունէութիւնը ծաւալեցին Հայ յեղափոխական դաշնակցութիւն եւ Սոցիալիստ յեղափոխականների (էսէռական) կուսակցութիւնները:

Արեւմտեան Հայաստանի ազատագրութեան գաղափարները ջերմ արձագանգ գտան ախալքալաքցիների շրջանում, որոնց զգալի մասը, ծագումով լինելով արեւմտահայեր, շարունակում էր պահպանել հոգեւոր կապը իրենց նախկին հայրենիքի՝ Էրզրումի նահանգի հետ:

Ջաւախքը ծնունդ տուեց ազգային այնպիսի յայտնի դէմքերի, ինչպիսիք էին Յովհաննէս Քաջազնունին, Համօ Օհանջանեանը, Ռուբէն Տէր-Մինասեանը, Ռուբէն Դարբինեանը, գրողներ՝ Վահան Տէրեանը, Դերենիկ Դեմիրճեանը, աշուղ Ջիւանին եւ ուրիշներ:



ՋԱՒԱԽՔԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

1918 թ. Մայիսին, Ախալքալաքի գաւառ թուրքական զօրքերի ներխուժման պատճառով բնակչութեան ճնշող մեծամասնութիւնն արտագաղթեց Բակուրիանի անտառներ ու Ծալկայի շրջան: Գաղթած 80 հազար հայերից 35-40 հազար զոհուեց:

1921 թ. Նոյեմբերի 6-ին կնքուեց պայմանագիր Խորհրդային Հայաստանի ու Վրաստանի միջեւ հայ-վրացական սահմանագծի վերաբերեալ, որը մասնակի փոփոխութիւններով պահպանուեց առ այսօր:

Կորցնելով աջակցութեան յոյսի վերջին նշոյլը՝ գաւառի բնակչութիւնը դարձեալ բարձրացրել է Ախալքալաքը Հայաստանին միացնելու հարցը: Արտայայտելով ժողովրդի կամքը՝ համապատասխան որոշումներով 37 գիւղական խորհուրդներ 1925 թ. դիմել են Հայաստանի, Վրաստանի եւ ԽՍՀՄ (Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութիւն) բարձրագոյն իշխանական մարմիններին:

1927 թ. Օգոստոսի 13-ին ստորագրուեց հայ-վրացական նոր համաձայնագիր՝ ՀՍԽՀ (Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւն) Լենինականի եւ ՎՍԽՀ (Վրաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութիւն) Ախալքալաքի գաւառների վարչատնտեսական սահմանների անցկացման մասին, որը հաստատուեց Անդրֆեդերացիայի Կենտգործկոմի նախագահութեան 1929 թ. Փետրուարի 18-ի նիստում:

Ախալքալաքի նախկին գաւառի մեծ մասից կազմուեց նոյնանուն վարչական գաւառը (յետագայում՝ շրջան): Հիւսիսային գիւղերից Տաբաձոդուրին, Մոլիթը եւ Չիխարուլան մտցուեցին Բորժոմի, իսկ Դամալան՝ աւելի ուշ կազմաւորուած Ասպինձայի շրջանների մեջ: 1930 թ. Ախալքալաքի շրջանից անջատուեց նրա հարաւ-արեւելեան մասը՝ կազմելով Բոգդանովկայի (այժմ՝ Նինոծմինդա) շրջանը:

Երկրորդ աշխարհամարտի տարիներին, Ախալքալաքն ունեցաւ մարդկային մեծ կորուստներ: Բաւական է նշել, որ պատերազմի օրերին բանակ զօրակոչուած 12684 ախալքալաքցիներից զոհուեց (մասամբ անհետ կորածներ) 7788-ը, այսինքն՝ 61,4 %-ը:

1946-1949 թ. զգալի թիւով հայեր Վրացական ԽՍՀ հայաբնակ շրջաններից՝ Ջաւախքից, աքսորուեցին Ալթայի երկրամաս եւ Սիպիր:

1950-70-ական թուականներին տնտեսական եւ քաղաքական շարժառիթներով հայ բնակչութեան արտահոսքը Հայկական ԽՍՀ, Հիւսիսային Կովկաս եւ նախկին ԽՍՀՄ հանրապետութիւններ, մեծ չափեր ընդունեց: Ահա թէ ինչու բարձր ծնելիութեամբ եւ ընտանիքների բազմանդամութեամբ աչքի ընկած Ախալքալաքի եւ Բոգդանովկայի շրջաններում 1989 թ. բնակչութեան ընդհանուր թիւը հասաւ սոսկ 1917 թ. մակարդակին՝ 105 հազար մարդու:

ՋԱՒԱԽՔԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ՅԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿՇՐՋԱՆՈՒՄ

1989 թ. Ապրիլին Աջարիայում տեղի ունեցած երկրաշարժից անօթեւան մնացած կամ մասնակիօրէն տուժած աջարներին վրաց կառավարութիւնը չհապաղեց բնակեցնել Ախալքալաքի վրացական մի քանի (Կոթելիա, Հոկամ, Գոգաշէն, Չունչխա եւ այլն) եւ Բոգդանովկայի ռուս դուխոբորների (խմբգր. հոգու համար պայքարողներ) գիւղերում:

Այդ տարածաշրջանը խորհրդային ժամանակաշրջանում լիովին անտեսուած էր վրացական իշխանութիւնների կողմից: Վրաստանի անկախացումից յետոյ, ինչպէս Ջաւախքի, այնպէս էլ ողջ հանրապետութեան հայութեան նկատմամբ, յատկապէս 1990-ական թ. սկզբին՝ Զուիադ Գամսախուրդիայի (խմբգր. երկրի առաջին նախագահ) նախագահական շրջանում, աւելի ուժեղացաւ ազգային խտրականութիւնը:

Ջաւախքը ազգային կազմի միատարրութիւնից զրկելու համար Ախալքալաքի, Ախալցխայի, Նինոծմինդայի, Ասպինձայի եւ Ադիգէնի շրջանները միաւորեցին վարչական մէկ նահանգի մեջ, որի կեդրոն դարձաւ Ախալցխա քաղաքը: Դրանով Ախալքալաքն ու Նինոծմինդան դադարեցին անգամ ինքնուրոյն վարչական շրջան լինելուց, ջաւախքահայութիւնը կորցրեց Թիֆլիսի հետ ուղղակի յարաբերուելու հնարաւորութիւնը: Վարչական հիմնարկների մեծ մասը տեղափոխուեց Ախալցխա:

Յատկապէս ծանր է Ջաւախքի տնտեսական վիճակը: Աշխատատեղերի բացակայութիւնը, ազգային խտրականութեան առկայութիւնը, վրացական իշխանութիւնների նկատմամբ հիմնաւորուած անվստահութեան աճը, հազարաւոր մարդկանց հարկադրում են թողնել հայրենի բնակավայրերն ու արտագաղթել Ռուսաստան եւ այլ երկրներ:

Անմխիթար վիճակում է Ջաւախքի կրթամշակութային կեանքը: Դպրոցների մեծ մասը կիսաքանդ վիճակում է: Լիովին խաթարուած է հոգեւոր-եկեղեցական կեանքը: Նիւթական ծանր վիճակում են թոշակառուները, ջաւախքցի ազատամարտիկները:

Այդուհանդերձ, այսօր պատմական Ջաւախքն իր երկու շրջաններով, հիմնականում հայաբնակ մօտ 100 գիւղերով եւ աւելի քան 100 հազար բնակչութեամբ (95 %ը՝ հայեր, հարեւան Ախալցխայի, Ասպինձայի, Բորժոմի եւ Ծալկայի շրջաններում հաշւում է մօտ 30 հայկական գիւղ՝ 60 հազար հայ բնակիչներով) Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնների տարածքից դուրս գտնուող ամենամիատարր հայաբնակ երկրամասն է, որը ծանրագոյն սոցիալ (խմբգր. ընկերային)-տնտեսական ու քաղաքական պայմաններում իսկ շարունակում է ապրել իր հայաշունչ եւ հայեցի կեանքով:



ՋԱՒԱԽՔԸ՝ ԱՐՑԱԽԵԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏՈՒՄ

Հատուած

Պատմական Մեծ Հայքի թագաւորութեան Գուգարաց նահանգի գաւառներից մէկն է Ջաւախքը, իսկ ջաւախքցին հայի լաւագոյն տեսակի որակական գծերն է կրում իր մէջ: Ջաւախքցին ունի անբասիր, անխառն հոգու կերտուածք, ազգային դիմագիծ, աւանդապահ է, ազգասէր ու քաջ, արմատներով ամուր կառչած է մայր հողին: Նա իր տեսակարար կշիռն ունի մեր ազգի հոգեւոր, աշխարհիկ ու քաղաքական կեանքում: Ջաւախքը հայ ազգին տուել է բազում քաջորդիներ, հայ ազգի նուիրեալներ, գուսաններ, Տէրեան…

Այսօր ջաւախահայութիւնը յայտնուել է բարդ աշխարհաքաղաքական զարգացումների տեսադաշտում, լուրջ մարտահրաւէրների առջեւ է կանգնած: Այդպիսի մարտահրաւէրներ շատ է տեսել ջաւախքցին, բայց երբեք չի ընկճուել. «Ձախորդ օրերը ձմռան նման կու գան ու կ՚երթան»: Ազգային աւանդոյթներով ապրող հայ ժողովրդի այս հատուածը փոթորկալից այս օրերում շարունակում է պահել իր ազգային դիմագիծը եւ վառ հաւատով կերտել իր արժանահաւատ ապագան:

Թերթենք ջաւախքցու պատմութեան մատեանները եւ ծանօթանանք վերջին տասնամեակների նրա տարեգրութեանը:

1988թ. Ղարաբաղեան շարժում, ազգային ինքնագիտակցութեան զարթօնք, ազգային-ազատագրական պայքար…

Հայրենի հողի կանչով շատերը դարձան զինուոր, անմասն չմնաց նաեւ Ջաւախքը: Վրէժի ցասումով պոռթկաց ջաւախքցու աննկուն ոգին եւ դուրս եկաւ ահեղ կռուի հրապարակ: Դէպի Արցախ տանող բազմաթիւ ուղիներից մէկը դարձաւ Ջաւախք-Արցախ ճանապարհը: Պատուախնդիր ու հայրենասէր Ջաւախքը չէր կարող լռել: Սումկայիթում հայերի նկատմամբ կատարուած եղեռնագործութիւնից 13 օր անց՝ 1988թ. Մարտի 13-ին, Ախալքալաքի շրջանային մշակոյթի տան առջեւ տեղի ունեցաւ հանրահաւաք՝ ի պաշտպանութիւն Արցախի: Դրանից մի քանի օր անց տեղի ունեցաւ 2-րդ ցոյցը, որին մասնակցում էին 5000-ից աւելի ջաւախքցիներ: Ցուցարարների ձեռքերին կային տասնեակ պաստառներ հետեւեալ գրութիւններով. «Ղարաբաղը հայկական է», «Արցախը մերն է», «Ձեռքերդ հեռու Ղարաբաղից»… Այնքան զօրեղ էր ցասումն ու ոգեւորութիւնը, որ հանրահաւաքից յետոյ հարիւրաւոր երիտասարդներ ոտքով ճանապարհ ընկան դէպի Արցախ: Ղարաբաղեան ազատամարտին կազմակերպուած ու խելամիտ օգնութիւն ցոյց տալու համար Ջաւախքում ստեղծուեցին մի շարք հասարակական կազմակերպութիւններ: Ախալքալաքում կազմաւորուեց «Ջաւախք» ժողովրդական շարժումը, Բոգդանովկայում՝ «Փարվանա» կազմակերպութիւնը, Ախալցխայում՝ «Շառլ Ազնաւուր» բարեգործական միութիւնը: Փոքրիկ կազմակերպութիւններ ստեղծուեցին նաեւ Ջաւախքի հայաբնակ շատ գիւղերում՝ «Աղբիւր», «Անդրանիկ» եւ այլն:

Ջաւախքի մասնակցութիւնը հայ ժողովրդի ազգային պայքարում նշանաւորուեց պատմական դերակատարմամբ, որը դրսեւորուեց հիմնականում երեք գործօններով: Առաջինը՝ Ջաւախքի հայ քաջորդիների ֆիզիքական (խմբգր. մարմնական) ներկայութիւնն էր Արցախում: Ջաւախքցին դժուարին, օրհասական պահին կանգնեց իր եղբօր՝ արցախցու կողքին: Պայքարի մէջ նետուեց հայորդիների մի հաւաքական աստղաբոյլ: Նրանք քաջ գիտակցեցին պատերազմի իրողութիւնը՝ որպէս ազգային ազատագրութեան անհրաժեշտութիւն: Հարիւրաւոր ջաւախքցիներ զոհուեցին «վասն հայրենեաց» Արցախի այսօրուայ անկախութեան համար: Արցախեան գոյամարտի ամէն ազատամարտիկ չգրուած վէպի մի հերոս է, յաւերժ կենդանի լեկենտ (խմբգր. առասպելական հերոս): Այդ պատերազմում ծնուեցին հերոսներ, որոնց անմահ անունն ու սխրանքը ոսկէ տառերով են գրուած մեր գալիք պատմութեան էջերում: Ծանօթանանք այդ հերոսներից մի քանիսի կենսագրութեանը:

ՎԱՀԱՆ ՄԻԱՄՆԻԿԻ ՋԱՏԻԿԵԱՆ

Ծնուել է 1956թ. Ախալքալաքի շրջանի Լոմատուրցխ գիւղում: 1970թ., երբ նա 14 տարեկան էր, ընտանիքով տեղափոխւում են Երեւան: 1973թ. աւարտում է Երեւանի թիւ 90 միջնակարգ դպրոցը՝ նա այդ դպրոցի պարծանքն ու սիրելի սանն էր, ապա՝ Երեւանի ֆիզկուլտուրայի (խմբգր. մարմնամարզական), ժողովրդական տնտեսութեան ինստիտուտները (խմբգր. համալսարան): Ծառայել է խորհրդային բանակում: 1989-1991թ.«Մալաթիա» երկրապահ կամաւորական ջոկատի հրամանատարն էր: Վահանենց տանը յարգի էին գիրն ու գրականութիւնը: Նա իր հայրենասիրութեան առաջին մկրտութիւնն ստացել է իրենց տանը: Վահանը տատից է իմացել, որ Յարութիւն պապը չի վերադարձել Հայրենական մեծ պատերազմից, խորապէս զգացել է նրա վիշտը, ատելութեամբ լցուել պատերազմի ու այն հրահրողների դէմ: Վահանը կոփուած ու մեծ ուժի տէր էր, ութ տարի մարզուել է «Սպարտակ» ակումբում: Ազատ ոճի ըմբշամարտիկ էր, մասնակցել էր բազմաթիւ մրցումների եւ արժանացել պարգեւների: Նա երբեք չի ընկճուել, մնացել է միշտ անպարտելի: Յետոյ անուանի մարզիկը դառնում է մարզիչ: Նրա ձեռքի տակ աճած մարզիկները միանում են «Մալաթիա» ջոկատին եւ մեկնում Արցախ: Վահանը գտնում էր, որ Արցախի հարցը միայն զէնքով է լուծուելու:

…Վահանն իր ջոկատով հերոսական մարտեր էր մղում Մաճկալաշէնի, Կոռնիձորի, Երասխաւանի, Աղդամի, Գետաշէնի, Մարտունաշէնի, Նոյեմբերեանի եւ Իջեւանի ամէն մի թիզ հողի համար: Նա կանխազգում էր, թէ Հայաստանին ու Արցախին ինչ վտանգ է սպառնում, եւ թէ դրանք ինչ զարգացումներ են ստանալու: Պատահական չէր, որ ընդհանուր մարտերի հրամանատարը՝ Վազգէն Սարգսեանը, որոշումներ կայացնելիս յաճախ էր խորհրդակցում Վահան Ջատիկեանի հետ: Ռազմական գործում նրա տաղանդն արտայայտուեց Գետաշէնի եւ Շահումեանի հայ բնակչութեան դէմ Ատրպէյճանի խորհրդային ղեկավարների կանխամտածուած «Օղակ» գործողութիւնից գետաշէնցիներին մէծ դժուարութեամբ, առանց զոհեր տալու տեղափոխելիս: 1991թ. Ջատիկեանն ընտրվում է Շահումեանի գործկոմի նախագահ: Նրա համար դժուար էր բաժանուել մարտական ընկերներից, դրա համար Վահանը մարտնչում էր երկու ճակատով՝ թիկունքից աջակցում էր «Մալաթիա» ջոկատի մարտական գործողութիւններին, զէնք ու զինամթերք էր հայթայթում, միւս կողմից աշխատում էր շրջանը դուրս բերել ծանր ճգնաժամից: Ժողովուրդը հաւատում, վստահում եւ սիրում էր նրան եւ համոզուած էր, որ կը յաղթահարուեն բոլոր դժուարութիւնները, քանզի իրենց հետ է Վահանը: Եւ ժողովրդի վստահութիւնը պարտաւորեցնում էր Վահանին: Նա քաջ գիտէր, որ պաշտօնը ոչ թէ արտօնութիւն է, այլ՝ պարտաւորութիւն, որ ինքը պատասխանատու է իր խղճի ու ժողովրդի առաջ:

Մալաթիա-Սեբաստիա համայնքի բարգաւաճումն ու զարգացումը կապուած է Վահան Ջատիկեանի անուան հետ: Նրա անժամանակ ու հանկարծակի մահը ցնցեց մարդկանց: Կորուստը մեծ էր, վիշտը՝ անչափելի: Վահանն ընկաւ 1999թ…. Ինչքան լուսաւոր երազներ անկատար մնացին….Հերոսի աճիւնն ամփոփուած է Եռաբլուրում: Ջատիկեանը մարմնապէս չկայ, բայց նրա հոգին անմահ է եւ ապրելու է բոլոր սերունդների հետ:

ԱՐԹԻՒՐ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՂԱՐԻՊԵԱՆ

Ծնուել է 1965թ. Ախալքալաքի շրջանի Կուլիկամ գիւղում: Սովորել է Երեւանի 142-րդ դպրոցում եւ զուգընթաց հաճախել Յ. Կոճոյեանի անուան նկարչական դպրոցը: 8-րդ դասարանն աւարտելուց յետոյ ընդունուել է Փ. Թերլեմեզեանի անուան գեղարուեստի ուսումնարան, ապա ուսանել Երեւանի գեղարուեստաթատերական ինստիտուտում (համալսարան):

1988թ. կամովին մասնակցել է ազգային-ազատագրական մարտերին: Արթիւրի նման զգայուն հոգու տէր մտաւորականն ու հայրենասէր երիտասարդը ի՞նչպէս կարող էր անտարբեր մնալ, երբ Արցախում արեան մէջ ուզում էին խեղդել հայի ազատատենչ ոգին: Արուեստի զինուորը դարձաւ պայքարի զինուոր՝ արծուային հպարտ ու քաջ էութեան համար ստանալով «Արծիւ» մականունը: Նա համոզուած էր, որ միայն ազգափրկիչ զէնքով կը լուծուի Արցախի ազատութեան խնդիրը: Արթիւրը ստեղծում է մարտական խմբեր, ձեռնարկում զինուորական գործին անհրաժեշտ աշխատանքներ, Խորհրդային Միութեան տարբեր վայրերից զէնք է հայթայթում Արցախեան պատերազմի համար: Նա մասնակցել է գրեթէ բոլոր խոշոր մարտերին, որոնց արդիւնքում ազատագրուեց Արցախի զգալի մասը, եւ քաջ գիտակցում էր, որ ազատութիւնը զէնքով են նուաճում, իսկ հողը՝ արեամբ պաշտպանում: Հարուստ է նրա մարտական կենսագրութիւնը: Անցել է Երասխաւանի, Բերդաձորի, Շահումեանի, Շուշիի, Կրկժանի, Լեսնոյի, Խոճալուի, Գետաշէնի, Լաչինի ու Մարտակերտի ազատագրական թէժ կռիւների բովով: Յաւոք, 1992թ. Մարտակերտի շրջանի Սրխաւենդ գիւղի համար մղուած մարտի ժամանակ ականի պայթիւնից զոհուեց աննկուն զինուորը՝ Արցախեան հերոսամարտի քաջ ազատամարտիկը: Տաղանդաւոր քանդակագործի տաք արիւնը ոռոգեց հայրենի հողը: Արթիւրն անմահ է, նրա անունը հայ ժողովրդի սրտում է, քանզի հերոսները չեն մեռնում: Հերոսի աճիւնը ամփոփուած է Եռաբլուրում:

ՀԵՂԻՆԷ ՊՏՈՅԵԱՆ

Աւարտել է Երեւանի թիւ 61 դպրոցը:

Միշտ երազել է դառնալ բուժքոյր, բայց, ժամանակի հրամայականով, զինուորագրուեց Արցախի ազատագրական պայքարին: Երեւանի ռսկրաբանական հիւանդանոցում խնամում էր վիրաւոր ազատամարտիկներին, նրանցից լսում թուրքերի վայրագութիւնների մասին: Նրա մէջ արթնանում էր վրէժխնդրութիւնը եւ ձգտում էր շուտափոյթ հասնել մարտադաշտ: …Հեղինէի մօր ծննդեան օրն էր: Մօր համար նուէր գնելու պատրուակով Հեղինէն դուրս է գալիս տանից եւ մեկնում Արցախ եւ իր համար ընտրում է Հերմինէ ծածկանունը՝ ծնողներից ծածուկ մնալու համար:

